ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«21» 10 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ _____ Մ. Անանյան

ԱՑ-ԳԲԽ-43/16 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 02.04.2016թ. թիվ 1/73-3/11196-16 գրությամբ ներկայացված «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00127455) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ նաև՝ Նախարարություն), «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 13.08.2015թ. թիվ ԴԴ-3-Ե-4492 գրության հիման վրա, 18.08.2015թ. թիվ 1/73-1/22119-15 գրությամբ

դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

Կենտրոնը 12.03.2016թ. թիվ 01/04.1/901-16 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարության 18.08.2015թ. թիվ 1/73-1/22119-15 գրության հիման վրա «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում ներկայացրել է եզրակացություն, որով Կենտրոնը արձանագրել է, որ «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտել է մեկ անգամ, ինչի արդյունքում գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցությունը դադարեցվել է:

Այնուհետև, ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Ազգային ժողովի 20.07.2015թ. թիվ Ա-724 և 15.02.2016թ. թիվ ՖՏՀՀՎ-008 գրությունների հիման վրա, 23.02.2016թ. թիվ 1/73-3/6635-16 գրությամբ դիմել է Կենտրոնին՝ խնդրելով ուսումնասիրել «ՋԻԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

Կենտրոնը 25.03.2016թ. թիվ 01/04.1/1178-16 գրությամբ կատարված ուսումնասիրության արդյունքում Նախարարությանը ներկայացրել է եզրակացություն, որով Կենտրոնը արձանագրել է, որ գործում առկա չէ որևէ ապացույց «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից «ՀՀ ԱԺ ՇՀԱՊՁԲ-11/8-2015-4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու վերաբերյալ, ուստի Կենտրոնը գտել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 23.02.2016թ. թիվ 1/73-3/6635-16 գրությամբ ներկայացված «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Սակայն, ՀՀ ֆինանսների նախարարությունը 02.04.2016թ. թիվ 1/73-3/11196-16 գրությամբ հանձնարարել է Կենտրոնին նախաձեռնել «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

1. «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կողմից կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-02» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի վերաբերյալ՝

Կենտրոնը 23.09.2015թ. թիվ 02/04.1/2499-15 գրությամբ կարծիք ստանալու նպատակով դիմել է «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին:

«ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն 06.10.2015թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Ընկերությունը չի կարողացել համակարգչի միջոցով ուղարկել սահմանված փաստաթղթերը՝ ինտերնետային կապի անորակ աշխատանքի պատճառով:

«ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն 10.02.2016թ. գրությամբ Կենտրոնին է ներկայացրել Ընկերության առարկությունները:

2. ՀՀ Ազգային ժողովի կողմից կազմակերպված «ՀՀ ԱԺ ՇՀԱՊՁԲ-11/8-2015-4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի վերաբերյալ՝

Կենտրոնը 24.02.2016թ. թիվ 01/04.1/658-16 գրությամբ կարծիք ստանալու նպատակով դիմել է «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին:

Ընկերությունը 03.03.2016թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն Ընթացակարգի շրջանակներում որակավորման փաստաթղթերի պահանջ ներկայացնելու որևէ նամակ չի ստացել:

3. «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն 13.08.2015թ. թիվ ԴԴ-3-Ե-4492 գրությամբ ներկայացրել է «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-02» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

Կենտրոնը 23.02.2016թ. թիվ 01/04.1/614-16 գրությամբ Պատվիրատուին է ներկայացրել «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի 10.02.2016թ. գրության պատճենը, որի վերաբերյալ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն 26.02.2016թ. թիվ ԴԴ-3-Ե-1119 գրությամբ հայտնել է, որ «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի 10.02.2016թ. գրությունը ակնհայտ չի համապատասխանում իրականությանը, քանի որ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-02» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով սահմանված ժամկետներում և սահմանված ձևով պատշաճ ծանուցվել է Կարգի 47-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով սահմանված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ: Համապատասխան ծանուցումներն ուղարկվել են ինչպես «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի՝ հայտով ներկայացված Ընթացակարգին մասնակցելու դիմումում (Հավելված 1) նշված էլեկտրոնային փոստի հասցեով, այնպես էլ՝ Armeps համակարգով՝ «ոչ ավտոմատ ծանուցում» գործիքի միջոցով:

4. ՀՀ Ազգային ժողովի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ Ազգային ժողովը 20.07.2015թ. թիվ Ա-724 և 15.02.2016թ. թիվ ՖՏՀՀՎ-008 գրություններով ներկայացրել է «ՀՀ ԱԺ ՇՀԱՊՁԲ-11/8-2015-4» ծածկագրով

շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

Կենտրոնը 12.03.2016թ. թիվ 01/04.1/906-16 գրությամբ Պատվիրատուին է ներկայացրել «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի 03.03.2016թ. գրության պատճենը:

ՀՀ Ազգային ժողովը 21.03.2016թ. թիվ ԴԴ-3-Ե-1119 գրությամբ հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը կայացրած որոշումների վերաբերյալ ծանուցել է Ընթացակարգին մասնակցած բոլոր մասնակիցներին www.armeps.am էլեկտրոնային համակարգով (ոչ ավտոմատ ծանուցմամբ), մասնավորապես՝ NN 4-րդ և 5-րդ արձանագրությունները գրությամբ ուղարկվել է նաև «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի՝ հայտով ներկայացված Ընթացակարգին մասնակցելու դիմումում նշված փոստի հասցեով:

Միևնույն ժամանակ Պատվիրատուն հայտնել է, որ ՀՀ Ազգային ժողովը չի կարող ներկայացնել ՀՀ ԱԺ աշխատակազմի կողմից «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին ուղարկված նամակների էլեկտրոնային էջերը արտատպված ձևաչափով, քանի որ 2015թ. դեկտեմբեր ամսին սերվերի հետ կապված խնդիրներ են առաջացել և ջնջվել են բոլոր ուղարկված և ստացված նամակները:

<u>4. ՍՅ-ԳԲԽ-43/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՀՀ ֆինանսների նախարարության 02.04.2016թ. N 1/73-3/11196-16 գրությամբ ներկայացված «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. *«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կողմից կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-02» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի վերաբերյալ՝*

- «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կողմից համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման

նպատակով կազմակերպվել է «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-02» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն:

- Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝

✓ 20.07.2015թ. ժամը 11:00-ին կայացած նիստի N 5 արձանագրության 3.4 կետի համաձայն՝ Ընթացակարգի 6-րդ, 8-րդ, 9-րդ, 17-րդ և 18-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն:

✓ 28.07.2015թ. ժամը 10:00-ին նիստի N 6 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումներ գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված փաստաթղթերը սահմանված կարգով և ժամկետում «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն չի ներկայացրել:

- Կենտրոնը 12.03.2016թ. թիվ 01/04.1/901-16 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարության 18.08.2015թ. թիվ 1/73-1/22119-15 գրության հիման վրա «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում ներկայացրել է եզրակացություն, որով Կենտրոնը արձանագրել է, որ «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտել է մեկ անգամ, ինչի արդյունքում գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցությունը դադարեցվել է:

2. *ՀՀ Ազգային ժողովի կողմից կազմակերպված «ՀՀ ԱԺ ՇՀԱՊՁԲ-11/8-2015-4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի վերաբերյալ՝*

- ՀՀ Ազգային ժողովի կողմից կազմակերպվել է «ՀՀ ԱԺ ՇՀԱՊՁԲ-11/8-2015-4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն:

- Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.07.2015թ. ժամը 11:30-ին նիստի N 5 արձանագրության համաձայն՝ «ՀՀ ԱԺ ՇՀԱՊՁԲ-11/8-2015-4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի մասնակից «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից 4-րդ չափաբաժնի մասով ներկայացված

որակավորման փաստաթղթերում արձանագրվել էին անհամապատասխանություններ, ինչով պայմանավորված առաջարկվել էր Ընկերությանը շտկել, սակայն նույն թվականի հուլիսի 16-ի ժամը 11:30-ի դրությամբ մասնակցից պատասխան չի ստացվել և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

- Այնուհետև, ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Ազգային ժողովի 20.07.2015թ. թիվ Ա-724 և 15.02.2016թ. թիվ ՖՏՀՀՎ-008 գրությունների հիման վրա, 23.02.2016թ. թիվ 1/73-3/6635-16 գրությամբ դիմել է Կենտրոնին՝ խնդրելով ուսումնասիրել «ՋԻԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:
- Կենտրոնը 25.03.2016թ. թիվ 01/04.1/1178-16 գրությամբ կատարված ուսումնասիրության արդյունքում Նախարարությանը ներկայացրել է եզրակացություն, որով Կենտրոնը արձանագրել է, որ գործում առկա չէ որևէ ապացույց «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից «ՀՀ ԱԺ ՇՀԱՊՁԲ-11/8-2015-4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու վերաբերյալ, ուստի Կենտրոնը գտել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 23.02.2016թ. թիվ 1/73-3/6635-16 գրությամբ ներկայացված «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:
- Սակայն, ՀՀ ֆինանսների նախարարությունը 02.04.2016թ. թիվ 1/73-3/11196-16 գրությամբ հանձնարարել է Կենտրոնին նախաձեռնել «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

Նախարարությունը միաժամանակ տեղեկացրել է, որ ՀՀ Ազգային ժողովի կողմից կազմակերպված «ՀՀ ԱԺ ՇՀԱՊՁԲ-11/8-2015-4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Պատվիրատուն ուսումնասիրել է «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի 4-րդ չափաբաժնի մասով ներկայացրած որակավորման

փաստաթղթերը և արձանագրել թերությունները, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ մասնակիցը ստացել է ծանուցումը որակավորման փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

Նախարարությունը նշել է նաև, որ ՀՀ Ազգային ժողովի 21.03.2016թ. թիվ ԴԴ-3-Ե-1119 գրությամբ հայտնել է, որ գնահատող հանձնաժողովը կայացրած որոշումների վերաբերյալ ծանուցել է նշված գնման ընթացակարգին մասնակցած բոլոր մասնակցիներին armeps.am էլեկտրոնային համակարգով (ոչ ավտոմատ ծանուցմամբ):

- Կենտրոնը ՀՀ Ազգային ժողովի կողմից կազմակերպված «ՀՀ ԱԺ ՇՀԱՊՁԲ-11/8-2015-4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը փորձաքննության է ենթարկել, որը արդյունքում պարզվել է, որ 2015թ. հուլիս ամսում ՀՀ Ազգային ժողովի կողմից «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին Ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով ներկայացված որակավորման փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ www.armeps.am էլեկտրոնային համակարգով (ոչ ավտոմատ ծանուցմամբ) որևէ ծանուցում չի ուղարկվել:

5. ՍՅ-ԳԲԽ-43/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

Կենտրոնը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 18.08.2015թ. թիվ 1/73-1/22119-15, 23.02.2016թ. թիվ 1/73-3/6635-16 և 02.04.2016թ. թիվ 1/73-3/11196-16 գրությունները, «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի 13.08.2015թ. թիվ ԴԴ-3-Ե-4492 և 26.02.2016թ. թիվ ԴԴ-3-Ե-1119 գրությունները և կից փաստաթղթերը, ՀՀ Ազգային ժողովի 20.07.2015թ. թիվ Ա-724, 15.02.2016թ. թիվ ՖՏՀՀՎ-008 և 21.03.2016թ. թիվ ԴԴ-3-Ե-1119 գրությունները և կից փաստաթղթերը, «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի 06.10.2015թ., 10.02.2016թ. և 03.03.2016թ. Կենտրոնին ուղղված գրությունները, հայտնում է հետևյալը.

1. «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կողմից կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-02» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի վերաբերյալ՝

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կողմից համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-02» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝

- 20.07.2015թ. ժամը 11:00-ին կայացած նիստի N 5 արձանագրության 3.4 կետի համաձայն՝ Ընթացակարգի 6-րդ, 8-րդ, 9-րդ, 17-րդ և 18-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն:
- 28.07.2015թ. ժամը 10:00-ին նիստի N 6 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումներ գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված փաստաթղթերը սահմանված կարգով և ժամկետում «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն չի ներկայացրել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված

որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Այսպիսով, Պատվիրատուի կողմից Կենտրոնին է ներկայացվել «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի 21.07.2015թ. թիվ ԴԴ-3-Ե-4018 գրությունը (էլեկտրոնային եղանակով 21.07.2015թ. ուղարկվել է g-agroup@mail.ru էլեկտրոնային հասցեին), որով Պատվիրատուն հրավերով պահանջվող որակավորման պահանջներին մասնակցի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է ներկայացրել Ընթացակարգի 6-րդ, 8-րդ, 9-րդ, 17-րդ և 18-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցնող ճանաչված «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին: Ինչպես նաև գործում առկա է «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի 29.07.2015թ. թիվ ԴԴ-3-Ե-4184 գրությունը (էլեկտրոնային եղանակով 29.07.2015թ. ուղարկվել է g-agroup@mail.ru էլեկտրոնային հասցեին) ուղղված «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին, որով Պատվիրատուն ղեկավարվելով Կարգի 51-րդ կետով՝ առաջարկել է մեկ աշխատանքայի օրվա ընթացքում՝ մինչև 2015թ. հուլիսի 31-ը, ժամը՝ 11:00-ն, Հրավերով սահմանված կարգով ներկայացնել վերոնշյալ փաստաթղթերը, սակայն «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը (տեղեկությունները) չեն ներկայացվել, ինչը հաստատվում է նաև «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի 26.02.2016թ. թիվ ԴԴ-3-Ե-1119 գրությամբ ներկայացված համապատասխան ծանուցումները հավաստող էլեկտրոնային փոստից տպված քաղվածքներով:

Ելնելով վերոգրյալից՝ Կենտրոնը արձանագրում է «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտել է մեկ անգամ, ինչի արդյունքում գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցությունը դադարեցվել է:

2. ՀՀ Ազգային ժողովի կողմից կազմակերպված «ՀՀ ԱԺ ՇՀԱՊՁԲ-11/8-2015-4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի վերաբերյալ՝

ՀՀ Ազգային ժողովի կողմից կազմակերպվել է «ՀՀ ԱԺ ՇՀԱՊՁԲ-11/8-2015-4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու

ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.07.2015թ. ժամը 11:30-ին նիստի N 5 արձանագրության համաձայն՝ «ՀՀ ԱԺ ՇՀԱՊՁԲ-11/8-2015-4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի մասնակից «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից 4-րդ չափաբաժնի մասով ներկայացված որակավորման փաստաթղթերում արձանագրվել էին անհամապատասխանություններ, ինչով պայմանավորված առաջարկվել էր Ընկերությանը շտկել, սակայն նույն թվականի հուլիսի 16-ի ժամը 11:30-ի դրությամբ մասնակցից պատասխան չի ստացվել և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

Կենտրոնը 25.03.2016թ. թիվ 01/04.1/1178-16 գրությամբ կատարված ուսումնասիրության արդյունքում Նախարարությանը ներկայացրել է եզրակացություն, որով Կենտրոնը արձանագրել է, որ գործում առկա չէ որևէ ապացույց «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից «ՀՀ ԱԺ ՇՀԱՊՁԲ-11/8-2015-4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու վերաբերյալ, ուստի Կենտրոնը գտել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 23.02.2016թ. թիվ 1/73-3/6635-16 գրությամբ ներկայացված «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Սակայն, ՀՀ ֆինանսների նախարարությունը 02.04.2016թ. թիվ 1/73-3/11196-16 գրությամբ հանձնարարել է Կենտրոնին նախաձեռնել «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

Նախարարությունը միաժամանակ տեղեկացրել է, որ ՀՀ Ազգային ժողովի կողմից կազմակերպված «ՀՀ ԱԺ ՇՀԱՊՁԲ-11/8-2015-4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Պատվիրատուն ուսումնասիրել է «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի 4-րդ չափաբաժնի մասով ներկայացրած որակավորման փաստաթղթերը և արձանագրել թերությունները, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ

մասնակիցը ստացել է ծանուցումը որակավորման փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

Նախարարությունը նշել է նաև, որ ՀՀ Ազգային ժողովի 21.03.2016թ. թիվ ԴԴ-3-Ե-1119 գրությամբ հայտնել է, որ գնահատող հանձնաժողովը կայացրած որոշումների վերաբերյալ ծանուցել է նշված գնման ընթացակարգին մասնակցած բոլոր մասնակցիներին armeps.am էլեկտրոնային համակարգով (ոչ ավտոմատ ծանուցմամբ):

Կենտրոնը ՀՀ Ազգային ժողովի կողմից կազմակերպված «ՀՀ ԱԺ ՇՀԱՊՁԲ-11/8-2015-4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը փորձաքննության է ենթարկել, որը արդյունքում պարզվել է, որ 2015թ. հուլիս ամսում ՀՀ Ազգային ժողովի կողմից «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին Ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով ներկայացված որակավորման փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ www.armeps.am էլեկտրոնային համակարգով (ոչ ավտոմատ ծանուցմամբ) որևէ ծանուցում չի ուղարկվել:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

Այսպիսով, Պատվիրատուի կողմից Կենտրոնին չի ներկայացվել Ընթացակարգի շրջանակներում 2015թ. հուլիս ամսում ՀՀ Ազգային ժողովի կողմից «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին Ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով ներկայացված որակավորման փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ www.armeps.am էլեկտրոնային համակարգով (ոչ ավտոմատ ծանուցմամբ) ուղարկելու մասին որևէ ապացույց:

Բացի այդ, Կենտրոնը ՀՀ Ազգային ժողովի կողմից կազմակերպված «ՀՀ ԱԺ ՇՀԱՊՁԲ-11/8-2015-4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը փորձաքննության է ենթարկել, որը արդյունքում պարզվել է, որ 2015թ. հուլիս ամսում ՀՀ Ազգային ժողովի կողմից «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին Ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով ներկայացված որակավորման փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ www.armeps.am էլեկտրոնային համակարգով (ոչ ավտոմատ ծանուցմամբ) որևէ ծանուցում չի ուղարկվել:

Ելնելով վերոգրյալից՝ Կենտրոնը արձանագրում է «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն «ՀՀ ԱԺ ՇՀԱՊՁԲ-11/8-2015-4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակում ստանձնած պարտավորություն չի խախտել:

Այսպիսով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում մեկ անգամ է խախտել գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը (*«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կողմից կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-02» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ*), որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցությունը դադարեցմանը, Կենտրոնը գտնում է, որ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ «ա» ենթակետով նախատեսված հիմքով «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Կենտրոնը առաջարկում է ՀՀ ֆինանսների նախարարության 02.04.2016թ. թիվ 1/73-3/11196-16 գրությամբ ներկայացված «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00127455) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-43/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Հովակիմյան